Հավելված 2

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ Ակտիվների և պարտավորությունների կոմիտե

2022 թվականի նոյեմբեր 23-ի N 135 արձանագրությամբ

ԱյԴի Բանկի հաշվարկային տոկոսադրույք (ԱԲՀՏ)

Ուժի մեջ է մտնում 01/01/2023թ

Արժույթ	**ԱԲՀՏ**	Ուժի մեջ է մինչև
ՀՀ դրամ	9.3%	30/06/23
ԱՄՆ դոլար	3.9%	30/06/23
Եվրո	2%	30/06/23

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից լողացող տոկոսադրույքների սահմանման համար հիմք հանդիսացող հաշվարկային տոկոսադրույքի սահմանման

Գլուխ 1. Նպատակը

1. Սույն մեթոդաբանության նպատակն է սահմանել **«ԱյԴի Բանկ հաշվարկային տոկոսադրույքի»** (այսուհետ՝ ԱԲՀՏ) հաշվարկման կարգը, որի կիրառումը հնարավորություն կտա հաճախորդներին տրամադրելու երկարաժամկետ վարկային միջոցներ և միևնույն ժամանակ զսպելու Բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետային ռիսկը՝ պայմանավորված տոկոսադրույքների հնարավոր փոփոխությամբ:

Գլուխ 2. ԱԲՀՏ-ի հաշվարկման կարգը և բաղադրիչները ըստ արժույթների

2. ԱԲՀՏ-ի հիման վրա կարող են սահմանվել Բանկի սեփական ռեսուրսներով ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և Եվրոյով տրամադրվող վարկերի համար հիմնական տոկոսադրույքներ:
3. ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և Եվրոյով տրամադրվող վարկերի համար **ԱԲՀՏ հաշվարկման հիմքում ընկած է ՄԿՏ-ն.**

Որտեղ՝

- **ՄԿՏ** – ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող առևտրային բանկերի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված մեկից հինգ տարի ժամկետով ավանդների **Միջին Կշռված Տոկոսադրույքն** է համապատասխան արժույթի համար՝ կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ: **Միջին Կշռված Տոկոսադրույքը** հրապարակվում է ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքում, **«Դրամավարկային և Ֆինանսական վիճակագրություն»** բաժնում (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx):

4. Սույն մեթոդաբանության հիմա վրա ԱԲՀՏ-ն առաջին անգամ հրապարակելիս, ինչպես նաև 5-րդ կետի պայմանին համապատասխան յուրաքանչյուր անգամ ԱԲՀՏ-ն փոփոխելու դեպքում ԱԲՀՏ = ՄԿՏ:

Գլուխ 3. ԱԲՀՏ-ի սահմանումը և կիրառումը

5. ԱԲՀՏ-ն Բանկի կողմից սահմանվում է տարեկան երկու անգամ՝ մայիս և նոյեմբեր ամիսներին՝ հիմք ընդունելով ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալ ամսվան նախորդող ամենաթարմ համապատասխան տոկոսադրույքները:
6. ԱԲՀՏ-ն փոփոխվում է այն դեպքում, երբ 4-րդ կետով սահմանված ժամանակահատվածների համար հերթական հրապարակված ՄԿՏ-ն Բանկի կողմից վերջին հրապարակված ԱԲՀՏ-ի համեմատ փոփոխվում է 1% և ավելի տոկոսային կետով՝ ՀՀ դրամի համար ու 0.5% և ավելի տոկոսային կետով՝ ԱՄՆ դոլարի և Եվրոյի համար:

7. ՀՀ Կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված «մեկից հինգ տարի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքը 6 ամսվա ընթացքում չհրապարակելու դեպքում ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով և Եվրոյով տրամադրվող վարկերի համար ԱԲՀՏ-ի հաշվարկը կկատարվի հետևյալ կերպ.

ԱԲՀՏ = ՄԿՏ* + Ճշգրտող գործակից

Որտեղ՝

- **ՄԿՏ*** – ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող առևտրային բանկերի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված «181 օրից մինչև 1 տարի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքն է համապատասխան արժույթի համար՝ կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ: **«ՄԿՏ*»** հրապարակվում է ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքի **«Դրամավարկային և Ֆինանսական վիճակագրություն» բաժնում** (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx)
- **Ճշգրտող գործակից** – այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահին նախորդող ժամանակահատվածի դրությամբ «**$ՄԿՏ_{n-m}$ – $ՄԿՏ_{n-m}$***» մեծություն, **որտեղ՝**
  - ✓ **n-ը՝** այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահն է,
  - ✓ **m-ը՝** այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահին նախորդող ժամանակահատվածն է, որի ժամանակ հրապարակվել են վերոնշյալ տոկոսադրույքները,
- Ի դեպ Ճշգրտող գործակիցը հաշվարկվում է միայն այլընտրանքային լողացող տոկոսադրույքին անցնելու պահին և ֆիքսվում որպես հաստատուն մեծություն՝ այլընտրանքային լողացող տոկոսադրույքի կիրառման ընթացքում:

8. Սույն մեթոդաբանությունը գործում է այն վարկերի և լողացող տոկոսադրույքով տրամադրվող այլ վարկային գործիքների համար, որոնք հաստատվել են 15/07/2022թ-ից հետո: